



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ստանդարտների ազգային ինստիտուտի 2014թ.
տարեկան գործունեության վերաբերյալ

Տնօրեն՝ ԵՆՈՔ ԱԶԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Փետրվար 2015



ISO 9001:2000 CERTIFIED



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	6
1.1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ.....	6
1.2. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ.....	7
1.3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	8
2. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.....	15
2.1. ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ	15
2.2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	17
2.3. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	17
3. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.....	22
3.1. ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ.....	22
3.2. ՍՆԵԴԻ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ	22
3.3. ՆԱԿԹԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ	23
4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ	24
4.1. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....	24
4.2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ	25
5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	28
6. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	30
7. 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	32

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ 2014թ. տարեկան գործունեության վերաբերյալ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է: Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների ու ծախսերի նախահաշիվ և բանկային հաշիվ:

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ինստիտուտ) գործունեությունն ընդգրկում է 4 հիմնական ոլորտներ՝ ստանդարտացման աշխատանքներ, համապատասխանության հավաստման, այդ թվում՝ պարենային և ոչ պարենային ապրանքների, հանրային սննդի ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքներ, լաբորատոր փորձարկումներ և ուսուցման կազմակերպում: Սույն հաշվետվությունն ընդգրկում է նշված ոլորտներում Ինստիտուտի կողմից 2014թ. հունվարի 1-ից մինչև 2015թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեությունը, Ինստիտուտի ինստիտուցիոնալ կառուցվածքի վերափոխումների և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:

Ստանդարտների ազգային ինստիտուտի ռազմավարական նպատակներն են՝

- Իսթանբուլ հայկական ապրանքատեսակների առևտուրը միջազգային շուկաներում,
- Երաշխավորել ազգային ստանդարտների շարունակական բարելավումը և համապատասխանեցումը փոփոխվող պահանջներին,
- Բարձրացնել ազգային ստանդարտների ընկալումը, ճանաչումը և կիրառումը,
- Բացահայտել և լուծումներ առաջարկել այն ազգային խնդիրների վերաբերյալ, որոնք կարող են կարգավորվել ստանդարտների և համապատասխանության գնահատման ընթացակարգերի միջոցով:

Ստանդարտների ազգային ինստիտուտը, որը միջազգային շրջանակներում հայտնի է իր «SARM» հապավումով, այն է՝ «Հայաստանի ստանդարտներ», իր մեջ ներառում է գործունեության հետևյալ հիմնական ծառայությունները.

- Ստանդարտացում, այդ թվում՝ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի վարման ծառայությունները,
- Համապատասխանության հավաստման (սերտիֆիկացման), այդ թվում՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման ծառայությունները,
- Պարենային և ոչ պարենային ապրանքների, այդ թվում՝ նավթամթերքի և էլեկտրատեխնիկական լաբորատոր փորձարկումները,
- Ուսուցում:

Բոլոր ծառայությունները ղեկավարվում են համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների կողմից՝ ՍԱԻ-ի տնօրենի համակարգման ու ղեկավարման ներքո: Բոլոր ուղղություններով գործունեության պատասխանատվությունը կրում է ՍԱԻ տնօրենը:

Գործունեության կարևորագույն ուղղություններից է ստանդարտացման ոլորտում միջազգային համագործակցությունը: Ստանդարտների ազգային ինստիտուտը 1997թ-ից ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը **ԻՍՕ (ISO) միջազգային ստանդարտացման կազմակերպությունում լիիրավ անդամի** և 2008 թվականի հունվարի 1-ից **ՍԵՆ (CEN) Ստանդարտացման Եվրոպական կոմիտեում՝ միացող (affiliate) անդամի** կարգավիճակով: Միաժամանակ ակտիվորեն մասնակցում է ԻՍՕ-ի և ՍԵՆ-ի տեխնիկական հանձնաժողովների և ենթահանձնաժողովների աշխատանքներին:

Ստանդարտների ազգային ինստիտուտը, որպես ստանդարտացման ազգային մարմին 1992թ.-ից անդամակցում և մասնակցում է ԱՊՀ մասնակից-պետությունների **Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի (ՍՉՍ ՄՊԽ)** ստանդարտացման կոմիտեների աշխատանքներին:

Ինստիտուտի գործունեության ուղղություններում կարևոր տեղ են զբաղեցնում ազգային (ՀՍ), միջպետական (ԳՕՍ) ստանդարտների մշակումը և փորձաքննությունը, միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտների նախագծերի փորձաքննության կազմակերպումը, ազգային ստանդարտների ընդունումը տեխնիկական հանձնաժողովների միջոցով, ինչպես նաև ստանդարտացման բնագավառի գիտա-մեթոդական աշխատանքները: Ինստիտուտը կորոզինացնում է ՀՀ տարածքում գործող 24 ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքները:

Ստանդարտների ազգային ինստիտուտը ձևավորում և վարում է Հայաստանի Հանրապետության ստանդարտների ազգային ֆոնդը, որը համալրված է շուրջ 30000 միավոր ստանդարտացման փաստաթղթերով, այդ թվում՝ միջազգային (ԻՍՕ), եվրոպական (ԵՆ), միջպետական (ԳՕՍ), Հայաստանի Հանրապետության ստանդարտներով (ՀՍ) և այլ պետությունների ստանդարտներով:

Ազգային ֆոնդի վարման և տեղեկատվության ապահովման աշխատանքների ավտոմատացման նպատակով ՀՀ-ում գործող ստանդարտների մատենագիտական տվյալների հիման վրա ներդրված է տեղեկատվական որոնման էլեկտրոնային համակարգ «SARM», որը հնարավորություն է տալիս կազմակերպություններին և անհատներին փնտրել և ձեռք բերել իրենց գործունեության համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթեր:

Ինստիտուտն ունի հավատարմագրված արտադրանքի, ծառայությունների և կառավարման համակարգերի (ԻՍՕ 9000, ԻՍՕ 14000 և ԻՍՕ 22000) սերտիֆիկացման մարմիններ, որոնք իրականացնում են նշված ոլորտների համապատասխանության հավաստման աշխատանքներ, ինչպես նաև լայն անվանացանկի արտադրատեսակների փորձարկումներ:

Ընկերության ուսումնա-մեթոդական կենտրոնում կազմակերպվում է հանրապետության ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման ոլորտների աշխատողների ուսուցում:

Ստորև ներկայացվում են Ինստիտուտի գործունեության վերաբերյալ որոշ հակիրճ տեղեկություններ:

ՍԱԻ (SARM)-ը թվերով

Ստանդարտացման ազգային (հայելային) տեխնիկական հանձնաժողովները (ՏՀ)

- 24 ՏՀ-ներ, որոնց կազմում ընդգրկված են ավելի քան՝
 - 400 փորձագետ
 - 250 շահագրգիռ կազմակերպություններ (պետական մարմիններ, մասնավոր և հասարակական կազմակերպություններ, այլ)
 - 100 ՏՀ և ԱԻ նիստ և քննարկում՝ տարեկան
- Ազգային ՏՀ-ները հանդիսանում են հայելային ՏՀ-ներ՝
 - 40 ԻՍՕ ՏՀ-ների (լիիրավ)
 - 28 ԻՍՕ ՏՀ-ների (դիտորդ)
 - 3 ՍԵՆ ՏՀ-ների մասնակից
 - 63 ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ ՏՀ-ների (լիիրավ, որից՝ 2 ՏՀ քարտուղարություն)
 - 49 ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ ՏՀ-ների (դիտորդ)

Բաժանորդներ	40 կազմակերպություն, մշտական խորհրդատվություն՝ ոլորտային ստանդարտների վերաբերյալ
--------------------	---

ՀՀ ստանդարտների մշակումը 2014 թվականին

- Ազգային գործող ստանդարտներ՝
- **Չուտ ազգային (ՀՍ)**՝ 18 հատ,
 - **Միջազգայինից փոխակերպված (ՀՍ ԻՍՕ)**՝ 33 հատ,
 - **Եվրոպականից փոխակերպված (ՀՍ ԵՆ)**՝ 21 հատ
 - **Միջպետական ստանդարտներ՝ 788**, որից ԳՕՍՏ՝ 389 հատ, ԳՕՍՏ ԵՆ՝ 68 հատ, ԳՕՍՏ ԻՍՕ 80 հատ, ԳՕՍՏ ԻԷԿ 251
 - **Ռուսաստանի Դաշնության ստանդարտներ՝ 372** հատ, որից ԳՕՍՏ Ռ 264, ԳՕՍՏ Ռ ԻՍՕ 33, ԳՕՍՏ Ռ ԵՆ 50, ԳՕՍՏ Ռ ԻԷԿ 25

Ընդամենը՝ 1232 հատ

1993-2014թթ ընթացքում ընդունված և գործող ազգային ստանդարտների ֆոնդը	Ազգային գործող ստանդարտներ	Քանակը
		Չուտ ազգային (ՀՍ)
	Միջազգայինից փոխակերպված, այդ թվում՝	668
	ՀՍ ԻՍՕ	387
	ՀՍ ԻՍՕ/ՄԷԿ	51
	ՀՍ ՄԷԿ	1
	ՀՍ ՕՀՍԱՍ	1
	ՀՍ (ԻՍՕ)	13
	ՀՍ (ԻՍՕ/ՄԷԿ)	2
	ՀՍ ԳՕՍՏ Ռ ԻՍՕ	44
	ՀՍ ԳՕՍՏ Ռ ԻՍՕ/ՄԷԿ	2
	ՀՍ ԳՕՍՏ Ռ ՄԷԿ	108
	ՀՍ ԳՕՍՏ Ռ (ԻՍՕ)	15
	ՀՍ ԳՕՍՏ Ռ (ՄԷԿ)	44
	Եվրոպականից և այլ երկրներից փոխակերպված, այդ թվում՝	700
	ՀՍ ԵՆ	147
	ՀՍ ԵՏՍԻ ՏՊ	4
	ՀՍ ԱՆՍԻ	1
	ՀՍ ԳՕՍՏ Ռ	527
	ՀՍ ԳՕՍՏ Ռ (ԵՆ)	11
	ՀՍ ԳՕՍՏ Ռ (Կանոններ ՄԱԿ ԵՏՀ)	3

	ՀԱՏ ԳՕՍՏ Ռ (ԴԻՆ)	4
	ՀԱՏ ԳՕՍՏ Ռ (ՍԻՍՊՈՒ)	3
	Միջպետական ստանդարտներ (ԳՕՍՏ), այդ թվում՝	3320
	ԳՕՍՏ	2183
	ԳՕՍՏ ԻՍՕ	199
	ԳՕՍՏ ԻՍՕ/ՄԷԿ	5
	ԳՕՍՏ ԵՆ	136
	ԳՕՍՏ ՄԷԿ	276
	ԳՕՍՏ (ԻՍՕ)	344
	ԳՕՍՏ (ՄԷԿ)	123
	ԳՕՍՏ (ԵՆ)	11
	ԳՕՍՏ (ԻՍՕ/ՄԷԿ)	3
	ԳՕՍՏ (Կանոններ ՄԱԿ ԵՏՀ)	3
	ԳՕՍՏ (ՍԻՍՊՈՒ)	2
	ՀԱՏ ԳՕՍՏ	33
	ՀԱՏ (ԳՕՍՏ)	2
	Ընդամենը՝	5088
Համագործակցություն	<p>ՍԱՐՄ-ը անդամակցում է՝</p> <p>ԻՍՕ-ին 1997թ.-ից՝ որպես լիիրավ անդամ, 2014թ. ընտրվել է ԻՍՕ Խորհրդի անդամ՝ 2015-2017թթ. համար</p> <p>ՍԵՆ-ին 2007թ.-ից՝ որպես միացող անդամ</p> <p>ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ ստանդարտացման բյուրոին 1992թ.-ից՝ որպես լիիրավ անդամ</p> <p>ՄԷԿ-ին 2004թ.-ից գործընկեր անդամի կարգավիճակով</p>	
Տեղեկատվության էլեկտրոնային հասանելիությունը	<p>Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ ստանդարտացման գործունեության ողջ ինֆորմացիան և ստանդարտների կատալոգը հասանելի են առցանց www.sarm.am հասցեով:</p>	

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվեց ՀՀ կառավարության 16.12.2010թ. թիվ 1693-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2010-2020թթ. ռազմավարությամբ» սահմանված, ինչպես նաև 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրից բխող միջոցառումների իրականացումը: Այդ միջոցառումների նպատակն է՝ ապահովել ազգային որակի ենթակառուցվածքի զարգացման հեռանկարային ուղղվածությունը և գոյություն ունեցող համակարգը համապատասխանեցնել միջազգային և Եվրասիական տնտեսական միության պահանջներին: Իրականացված միջոցառումները մասնավորապես նպատակուղղված էին Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների և դրանցից բխող ստանդարտների ներդրմանը Հայաստանի Հանրապետությունում:

1. Համաձայն ՀՀ կառավարության 20.12.2012թ. N1681-Ն որոշման, Ստանդարտների ազգային ինստիտուտը 2013թ. դեկտեմբեր և 2014թ. հունվար-փետրվար ամիսներին իրականացրեց իր գլխամասային կառույցի գույքի Կոմիտաս 49/2 հասցեից Կոմիտաս 49/4 հասցեի նոր տարածք տեղափոխման աշխատանքները, որոնք մինչև փետրվարի վերջ խափանել էին Ինստիտուտի բնականոն աշխատանքը՝ ջեռուցման բացակայության պատճառով: Նոր տարածքի տեղափոխման, գազմատակարարման և ջեռուցման ապահովման, էլեկտրալարերի ու էլեկտրասնուցման համակարգի որոշակի վերակառուցման ու վերանորոգման, ինտերնետ ու հեռախոսակապի ցանցերի ներկառուցման, որոշակի անհրաժեշտ նոր գույքի ձեռքբերման աշխատանքները պահանջեցին լրացուցիչ շուրջ 5 մլն դրամ չնախատեսված ծախսերի իրականացում: Բացի այդ, ընկերության գույքի մի մասը (ջահեր, շերտավարագույրներ, օդորակիչներ և այլն), որը ներկառուցված էր նախկին տարածքում հանձնվեց Սննդամթերքի անվտանգության ծառայությանը, որի դիմաց ՀՀ կառավարության 19.12.2013թ. թիվ 1502-Ն որոշմամբ ՍԱԻ-ին հատկացվեց 15790 հազ. դրամ:

2. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ միջև 2007թ. մայիսի 7-ին կնքված պահատվության պայմանագրի համաձայն 2007թ. մայիսի 14-ին ՍԱԻ-ի պահատվությանն էին հանձնվել 16.7 մլն դրամ սկզբնական արժեքով տպագրական սարքավորումներ, որոնք 100 տոկոսով ամորտիզացված են: 2007թ. շուկայական գնահատման համաձայն դրանց շուկայական արժեքը կազմել է 1567380 դրամ:

Նշված և Ինստիտուտի տպարանի մյուս սարքավորումները գտնվում էին Կոմիտաս 49/2 շենքում տպարանի համար նախկինում հատկացված տարածքում: Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի նոր Կոմիտաս 49/4 հասցեում գտնվող մասնաշենքի 9-12 հարկերում տպարանի տեղակայման և շահագործման համար համապատասխան պայմաններ ու հնարավորություններ չկան: Բացի այդ, տպարանը նախկինում օգտագործվում էր հաշվառման ենթակա համապատասխանության հավաստման սահմանված ձևաթղթերի տպագրության նպատակով: Սակայն «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-

րդ կետի համաձայն՝ այդ գործառույթը վերապահվել է Հավատարմագրման ազգային մարմնի գործադիր մարմնին: Այսինքն, Ինստիտուտի կողմից տպարանի հետագա շահագործման նպատակահարմարությունը վերանում է:

Հաշվի առնելով վերը նշվածը, ՍԱԻ դիմել էր ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը գույքի հետագա տնօրինման վերաբերյալ ցուցումներ ստանալու նպատակով: Համաձայն էկոնոմիկայի նախարարության 21.07.2014թ. թիվ 07/21.2/4417-14 գրությամբ տրված հանձնարարականի, հաշվետու ժամանակաշրջանում նախկին շենքում ապամոնտաժվեց տպարանի գույքը և այն հանձնվեց Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲ ընկերությանը:

3. Հաշվետու ժամանակաշրջանում Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից ապահովվեց ՀՀ կառավարության 20.12.2012թ. N1681-Ն որոշումից և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 23.12.2013թ. N1314-Ա հրամանից բխող ընկերության Կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը և օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցումը (ՀՀ էկոնոմիկայի նախարարի 3.03.2014թ. N200-Ա հրաման):

4. ՀՀ Վերահսկիչ պալատի խորհրդի 2014 թվականի հուլիսի 4-ի թիվ 22/3 որոշման համաձայն Ստանդարտների ազգային ինստիտուտում նշանակվել է ստուգում՝ ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ: Ստուգման իրականացման ժամկետ է սահմանվել 2014 թվականի հուլիսի 10-ից մինչև օգոստոսի 12-ը ներառյալ, իսկ ստուգումն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2013 թվականի հունվարի 1-ից մինչև ստուգման կատարման ավարտը: Այդուհանդերձ, ստուգումը օգոստոսի սկզբներին կասեցվեց, իսկ այնուհետև երկարաձգվեց մինչև 2015 թվականի մարտի 1-ը:

«Որակի ենթակառուցվածքների բարեփոխում» ծրագրի «Պետական աջակցություն «ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2014 թվականի ստանդարտացման ոլորտում ծրագրերի կատարման գծով» ենթածրագրով Ստանդարտների ազգային ինստիտուտին հատկացված 47 միլիոն դրամ գումարից տնտեսված 5 855 դրամով (միջոցները տնտեսվել են լաբորատոր սարքի և Ծրագրային ապահովման մշակման և ներդրման, կայքի ձևափոխման և առցանց էլեկտրոնային վաճառքի համակարգի ներդրման միջոցառումների ծրագրերից) գնվել է համակարգչային տեխնիկա:

1.2. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կառուցվածքը և հաստիքացուցակը ենթարկվեցին փոփոխությունների, որոնք ուղղված էին ընկերության գործունեության արդյունավետության բարձրացմանը, հաստիքացուցակի վերանայմանը և աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերի կրճատմանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի հուլիսի 24-ի թիվ 688-Ա հրամանով հաստատվեց Ինստիտուտի նոր կառուցվածքը և հաստիքացուցակը: Միաժամանակ, հիմնվելով ընկերության գործունեության փաստացի արդյունքների վրա, նշված հրամանով սահմանվեց նաև 2014թ. եկամուտների կանխատեսումը և ծախսերի նախահաշիվը:

Նոր հաստիքացուցակով նախատեսվել է 119 հաստիք՝ նախկին 117 հաստիքի փոխարեն: Միաժամանակ, հաստիքների համար նախատեսված աշխատավարձի դրույքաչափերը մասնակիորեն ենթարկվել են փոփոխության՝ միայն ղեկավար պաշտոնների մասով: Ըստ էության, նոր կառուցվածքում և հաստիքացուցակում տեղ գտած հիմնական

փոփոխությունը վերաբերվում է Լաբորատոր փորձարկումների կենտրոնի վերակազմակերպմանը առանձին 4 լաբորատոր միավորների, ինչը պայմանավորված է լաբորատորիաների հավատարմագրման պահանջներով և կհանգեցնի դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ինստիտուտն աշխատանքներ է իրականացրել կադրային ու փաստաթղթաշրջանառության գործունեության կազմակերպման ոլորտում, ինչը կապված էր ընկերության նոր կառուցվածքի և հաստիքացուցակի սահմանման հետ:

Մշակվել և հաստատվել են բոլոր հաստիքների նոր պաշտոնեական հրահանգները և բոլոր ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերը:

Աղյուսակ 1-ում բերվում է ՍԱԻ ընկերության հաստիքային աշխատողների թվաքանակի և միջին աշխատավարձի 2011-2014թթ. դինամիկան:

Աղյուսակ 1

Ինստիտուտի հաստիքային աշխատողների թվաքանակի և միջին աշխատավարձի 2011-2014թթ. դինամիկան

		2011	2012	2013	2014
1.	Հաստիքային աշխատողների միջին թվաքանակ, մարդ	123	126	122	112
2.	Միջին աշխատավարձ, դրամ	107800	103153	113675	117180

1.3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենի այցը Ռոսստանդարտ

Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ենոբ Ազարյանը 2014 թվականի հունվարի 28-ին պաշտոնական այցով գտնվում էր ՌԴ Տեխնիկական կանոնակարգման և չափագիտության դաշնային գործակալությունում, որտեղ հանդիպում ունեցավ գործակալության պետ Գրիգորի Էլկինի հետ: Հանդիպմանը մասնակցում էին նաև գործակալության պետի տեղակալ Ա.Վ.Աբրամովը, Տեխնիկական կանոնակարգման և ստանդարտացման վարչության պետ Վ.Ն.Կյուշնիկովը, միջազգային համագործակցության վարչության պետ Բ.Մ.Պոսյեմկինը և այդ վարչության բաժնի պետ Լ.Ա.Կապուստենկոն:

Հանդիպման արդյունքներով Ռոսստանդարտի պետ Գ.Էլկինը և Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ե.Ազարյանը ստորագրեցին Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության ճանապարհային քարտեզի իրականացմանն ուղղված ստանդարտացման ոլորտում Միջոցառումների ծրագիր: Համաձայն Միջոցառումների ծրագրով նախատեսված միջոցառումների, Ռոսստանդարտը հայկական կողմին կտրամադրի ստանդարտացման ոլորտի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, կաջակցի Ստանդարտների ազգային ինստիտուտին կազմակերպել համապատասխան տեխնիկական կանոնակարգերի գծով մասնագետների վերապատրաստումը, կկազմակերպվի խորհրդաժողով Երևանում արդյունաբերողների և գործարարների համար, կկազմակերպվեն համապատասխան մասնագետների միջև խորհրդակցություններ:

2. «Թուփ Թեն Ավարդ» միջազգային մրցանակաբաշխությունը Երևանում

Երևանի քաղաքապետարանում Ստանդարտների ազգային ինստիտուտի օժանդակությամբ 2014 թվականի հունվարի 21-ին կազմակերպվեց «Top Ten Award»

միջազգային հեղինակավոր մրցանակաբաշխությունը: Համաշխարհային ճանաչում ունեցող այս մրցանակաբաշխության առաքելությունն է բացահայտել որակի վերահսկման ճշգրիտ մեխանիզմներ ունեցող լավագույն բիզնես ոլորտները, որոնք գերակայում են շուկայում, ինչպես նաև խթանել աշխարհում մեծ տարածում ունեցող կառավարման համակարգի ստանդարտների կիրառումը կազմակերպություններում:

Մրցանակաբաշխությանը մասնակցել են 35 երկրներից ներկայացված շուրջ 100 կազմակերպություններ: Մրցանակաբաշխության համար որպես որակավորման պահանջ էր ընտրվել մասնակից կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը ISO 9001 ստանդարտի պահանջներին: Ըստ այդմ, «Top Ten Award» մրցանակաբաշխության փորձագետի կողմից Երևանի քաղաքապետարանում իրականացված ISO 9001 ստանդարտի պահանջների կատարման ուղղությամբ շուրջ մեկամյա աուդիտի արդյունքում քաղաքապետարանն արժանացել է ամենաբարձր գնահատականին: Սահմանված չորս՝ ոսկե, արծաթե, բրոնզե և գնահատման սերտիֆիկատ անվանակարգերից, Երևանի քաղաքապետարանին շնորհվել է «Top Ten Award» ոսկե մրցանակ: Միաժամանակ GSA բրիտանական հեղինակավոր կազմակերպության կողմից գնահատման արդյունքներով որոշում է կայացվել Երևանի քաղաքապետարանին շնորհել կառավարման համակարգի ISO 9001:2008 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխանության հավաստագիր: Բացի այդ, արդյունավետ կառավարման համար «Top Ten Award»-ի կողմից Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին հանձնվեց գնահատման հատուկ մրցանակ: Միջազգային ստանդարտացման ոլորտում բարձր գնահատման համար մրցանակ է ստացել նաև Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն, Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Ենոք Ազարյանը: Նախկինում ՍԱԻ արժանացել էր նաև ոսկե և բրոնզե մրցանակների:

3. Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ԱՊՀ երկրների 2013թ. մրցանակաբաշխություն

2014 թ. մարտի 27-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում տեղի ունեցավ արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ԱՊՀ երկրների 2013թ. մրցանակաբաշխության հաղթողների մրցանակների շնորհումը:

2012թ-ին ՍՉՍ ՄՊԽ 41-րդ նիստի որոշման համաձայն, հայտարարվեց Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ԱՊՀ երկրների 2013թ. մրցանակաբաշխության մասին:

Ստանդարտների ազգային ինստիտուտի ներկայացմամբ և աջակցությամբ, Հայաստանի Հանրապետությունից մրցանակաբաշխությանը մասնակցում էր «Ջերմուկ Գրուպ» ՍՊ ընկերությունը, որը սահմանված կարգով հաղթահարելով մրցանակաբաշխության փուլերը, ստացավ դափնեկրի պատվավոր կոչումը:

Չորրորդ մրցանակաբաշխության մրցանակները շնորհեց ԱՊՀ Գործադիր խորհրդի նախագահ, ԱՊՀ Գործադիր քարտուղար Սերգեյ Լեբեդևը:

Նշված մրցանակը շնորհվում է երկու տարին մեկ անգամ՝ ԱՊՀ երկրների մրցանակաբաշխության մասնակիցներին՝ արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում նշանակալի արդյունքներ ունենալու, արտադրանքի անվտանգության ապահովման, ինչպես նաև որակի կառավարման բարձրարդյունավետ մեթոդների կիրառման համար:

4. Եվրոպական ստանդարտացման կոմիտեի (CEN) 41-րդ վեհաժողովը և Եվրոպական ստանդարտացման երրորդ խորհրդաժողովը

2014թ-ի հունիսի 10-12-ը Ստամբուլում (Թուրքիա) տեղի ունեցավ Եվրոպական ստանդարտացման կոմիտեի (ՍԵՆ) 41-րդ վեհաժողովը և Եվրոպական ստանդարտացման երրորդ խորհրդաժողովը, որին մասնակցեցին ՍԱԻ ներկայացուցիչները: Վեհաժողովը ՍԵՆ-ի գլխավոր կառավարման մարմինն է և գումարվում է տարեկան առնվազն մեկ անգամ: Միջոցառմանը ներկա էին ավելի քան 200 պատվիրակներ, այդ թվում՝ ՍԵՆ-ի և Եվրոպական էլեկտրատեխնիկական ստանդարտացման կոմիտեի (ՍԵՆԵԼԵԿ) անդամ ստանդարտացման ազգային մարմինները, այդ կազմակերպությունների գործընկեր և ասոցիատիվ կազմակերպությունների պատվիրակությունները: Միջոցառմանը մասնակցեցին նաև Թուրքիայի կառավարության, Եվրոպական հանձնաժողովի և այլ միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան պաշտոնյաները:

ՍԵՆ-ի վեհաժողովի ընթացքում ներկայացվում է կազմակերպության գործունեության տարեկան հաշվետվությունը, քննարկվում են հետագա գործունեության ռազմավարությունը և զարգացման ուղղությունները: Անմիջապես վեհաժողովից հետո ՍԵՆ-ը հունիսի 11-ին կազմակերպել էր Եվրոպական Ստանդարտացման երրորդ խորհրդաժողովը՝ «Ինչպես ստանդարտացումը կարող է աջակցել արժաթյա տնտեսությանը» թեմայով:

ՍԱԻ պատվիրակությունը մի շարք հանդիպումներ ունեցան ՍԵՆ նախագահ Ֆ.Սմաքսվիլի, ՍԵՆ-ՍԵՆԵԼԵԿ տնօրեն Հ.Սանտիագոյի, ՍԵՆ-ՍԵՆԵԼԵԿ տնօրենի տեղակալ Ֆ.Վերդերայի, և մի շարք երկրների պատվիրակությունների հետ, որոնց ընթացքում հնարավոր եղավ քննարկել համագործակցության հիմնախնդիրները:

5. Գործարարների և արդյունաբերողների պահանջների իրականացման խնդիրներին նվիրված կոնֆերանս Երևանում.

Հունիսի 16-17 Ստանդարտների ազգային ինստիտուտը (SARM) և Ռուսաստանի Դաշնության տեխնիկական կանոնակարգման և չափագիտության Դաշնային գործակալությունը՝ Ռոսստանդարտը (ԳՕՍՏ Ռ) Երևանում կազմակերպեցին կոնֆերանս՝ նվիրված Հայաստանի գործարարների և արդյունաբերողների կողմից Եվրասիական Տնտեսական Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների իրականացման խնդիրներին: Կոնֆերանսը կազմակերպվել էր Ստանդարտների ազգային ինստիտուտի և Ռոսստանդարտի միջև 2014 թվականի հունվարի 28-ին ստորագրված համագործակցության միջոցառումների ծրագրի շրջանակներում: Կոնֆերանսի կազմակերպումը հնարավոր դարձավ Երևանի կոնյակի գործարանի ֆինանսական օժանդակության շնորհիվ:

Ռուսաստանի Դաշնության պատվիրակությունը գլխավորում էր Ռուսաստանի դաշնության տեխնիկական կանոնակարգման և չափագիտության դաշնային գործակալության պետի տեղակալ Ֆյոդոր Բուլիգինը, իսկ Ռուսաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը ներկայացնում էր փոխնախագահ Ա.Լոցմանովը: Պատվիրակության կազմում ընդգրկված էին բարձրաստիճան պաշտոնյաներ ՌԴ Արդյունաբերության և առևտրի նախարարությունից, ՌԴ Սպառողական շուկայի մասնակիցների միությունից, Ռուսական Երկաթուղուց, ՌԴ Գարեջրագործության, ոչ ալկոհոլային և գինեգործության արդյունաբերության ՌԳՀԻ-ից: Միջոցառմանը նաև մասնակցեցին ՀՀ պետական կառավարման մարմինների համապատասխան ոլորտի մասնագետներ և Հայաստանի գործարարներ ու արդյունաբերողներ:

Բացման խոսքով հանդես եկան Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գառնիկ Բադալյանը, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ Արսեն Ղազարյանը և Ռուսաստանի դաշնության տեխնիկական կանոնակարգման և չափագիտության դաշնային գործակալության պետ Ֆյոդոր Բուլիգինը:

Խոսվեց Մաքսային միությունում գործող տեխնիկական կանոնակարգերի մասին, մասնավորապես, նշվեց, որ ներկայումս գործում է 34 տեխնիկական կանոնակարգ, որոնցից երեքը տարածվում են բոլոր արտադրատեսակների վրա: Դրանք փաթեթավորմանը, սննդային հավելումներին և մակնշմանը վերաբերող տեխնիկական կանոնակարգերն են և կոչվում են հորիզոնական տեխնիկական կանոնակարգեր: Մնացածը հանդիսանում են ուղղահայաց կանոնակարգեր և տարածվում են տարբեր տեսակի արտադրատեսակների վրա:

Լուրջ քննարկում ծավալվեց գարեջրի, ոչ ալկոհոլային խմիչքների ու գինեգործական արտադրատեսակների վերաբերյալ: Նշվեց, որ վերանայվում են ոլորտի մի շարք ստանդարտներ, սակայն կա անհրաժեշտություն մշակելու նորերը և ձեռք բերվեց նախնական պայմանավորվածություն՝ միջպետական տեխնիկական հանձնաժողովում ստեղծել աշխատանքային խմբեր, որոնց աշխատանքներին կմասնակցեն ոլորտի լավագույն մասնագետները Ռուսաստանի Դաշնությունից և Հայաստանի Հանրապետությունից:

Հունիսի 17-ին Ստանդարտների ազգային ինստիտուտի, Չափագիտության ազգային ինստիտուտի և Ռուսաստանի Դաշնության տեխնիկական կանոնակարգման և չափագիտության Դաշնային գործակալության միջև քննարկվեցին համագործակցության խորացման խնդիրները, որի արդյունքում ստորագրվեց եռակողմ համագործակցության հուշագիր:

6. ԱՊՀ երկրների Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Միջպետական Խորհրդի 45-րդ նիստը Սոչիում, ՌԴ

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը՝ տնօրեն Ե.Ազարյանի գլխավորությամբ 2014թ. հունիսի 24-25 մասնակցեց ք.Սոչիում, Ռուսաստանի Դաշնություն ԱՊՀ երկրների Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Միջպետական Խորհրդի 45-րդ նիստի աշխատանքներին: Նիստի ընթացքում ամփոփվեցին հաշվետու ժամանակաշրջանում Խորհրդի իրականացրած աշխատանքները և նշարվեցին համագործակցության հետագա ուղիները՝ տեխնիկական կանոնակարգերի ներդաշնակեցման, միջպետական ստանդարտացման, չափագիտության, համապատասխանության գնահատման, այդ թվում՝ հավատարմագրման, տեխնիկական կանոնակարգերի պահանջների, նորմերի և կանոնների պահպանման վերահսկողության ոլորտներում:

ՄԴԽ 45-րդ նիստին դիտարկվեցին շուրջ 50 հարցեր, որոնք վերաբերվում էին ԱՊՀ անդամ երկրներում տեխնիկական կանոնակարգերի ներդաշնակեցման, միջպետական ստանդարտացման, չափագիտության, համապատասխանության գնահատման, այդ թվում՝ հավատարմագրման, տեխնիկական կանոնակարգերի պահանջների, նորմերի և կանոնների պահպանման վերահսկողության ոլորտներում աշխատանքների հետագա զարգացումներին, որոնց վերաբերյալ կայացվեցին համաձայնեցված որոշումներ:

7. ԻՍՕ 2016-2020 թվականների ռազմավարության քննարկումը Աստանայում

Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ե.Ազարյանը 2014թ. օգոստոսի 5-7 մասնակցեց ք.Աստանայում, Ղազախստան Ստանդարտացման միջազգային

կազմակերպության (ԻՍՕ) կողմից կազմակերպված Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների Ստանդարտացման ազգային մարմինների տնօրենների խորհրդաժողովին, որը նվիրված էր ԻՍՕ 2016-2020 թվականների ռազմավարության քննարկմանը:

ԻՍՕ 2016-2020թթ. ռազմավարությունն իրենից ներկայացնում է կազմակերպության, այդ թվում՝ ԻՍՕ անդամների, Կենտրոնական քարտուղարության և տեխնիկական կոմիտեների ռազմավարական ամբողջական պլանը: ԻՍՕ ներկայիս ռազմավարական պլանի ժամկետն ավարտվում է 2015 թվականին, իսկ նոր ռազմավարությունը մշակման փուլում է: ԻՍՕ 2016-2020 թվականների ռազմավարությունը պետք է առաջնորդի կազմակերպությանը դեպի նոր ապագա և պետք է արձագանքի տարաբնույթ տնտեսական փոխհարաբերություններին: Նոր ռազմավարությունը պետք է հիմնվի նախորդ 2011-2015թթ. ժամանակաշրջանի մի շարք լուրջ ձեռքբերումների և կազմակերպության ուժեղ կողմերի վրա:

ԻՍՕ 2016-2020 թվականների ռազմավարության քննարկումը վարեց ԻՍՕ գլխավոր քարտուղար պարոն Ռոբ Սթիլը: Խորհրդաժողովի ընթացքում մասնակից երկրների ստանդարտացման ազգային մարմինների ղեկավարները ակտիվորեն քննարկեցին առաջադրված հարցադրումները և ներկայացրեցին կոնկրետ առաջարկներ:

8. Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) 37-րդ վեհաժողովը. Ռիօ դե Ժանեյրո, Բրազիլիա

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը՝ տնօրեն Ե.Ազարյանի գլխավորությամբ 2014 թվականի սեպտեմբերի 8-12 մասնակցեց Բրազիլիայի Ռիօ դե Ժանեյրո քաղաքում տեղի ունեցած ԻՍՕ-ի՝ Ստանդարտացման Միջազգային Կազմակերպության 37-րդ վեհաժողովին: Հայկական պատվիրակության մասնակցությունը հնարավոր դարձավ Երևանի կոնյակի գործարանի ֆինանսական օժանդակության շնորհիվ:

ԻՍՕ վեհաժողովի ընթացքում կազմակերպվեցին խմբային քննարկումներ, ընտրվեցին ԻՍՕ փոխնախագահները, ԻՍՕ Խորհրդի և ԻՍՕ Տեխնիկական կառավարման խորհրդի նոր անդամները, ներկայացվեցին և հաստատվեցին ԻՍՕ ֆինանսա-տնտեսական գործունեության արդյունքները, զեկույցով հանդես եկան ԻՍՕ գլխավոր քարտուղարը, ԻՍՕ նախագահը, ԻՍՕ քաղաքականության և տեխնիկական կառավարման գծով փոխնախագահները, ԻՍՕ գանձապահը, տարածաշրջանային ստանդարտացման կազմակերպությունների ղեկավարները:

ԻՍՕ Խորհրդի անդամների ընտրություններին առաջադրվել էր նաև Հայաստանի Ստանդարտների ազգային ինստիտուտի թեկնածությունը: Ընդ որում, Խորհրդի անդամի ընտրություններում թե՛՛ պայքար ընթացավ, քանի որ հետաքրքրությունը բավականին մեծ էր: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով, ***Ստանդարտների ազգային ինստիտուտը երկրորդ անգամ անընդմեջ (մեկ փարի պարտադիր ընդմիջումից հետո) ընտրվեց ԻՍՕ Խորհրդի անդամ՝ 3 փարի ժամկետով (2015-2017թթ.):*** Դա վկայում է Ինստիտուտի բարձր միջազգային վարկանիշի, նախկինում կատարված արդյունավետ աշխատանքի և Ինստիտուտի հանդեպ միջազգային բարձր վստահության մասին:

ԻՍՕ 37-րդ վեհաժողովի ընթացքում հայկական պատվիրակությունը մի շարք հանդիպումներ ունեցավ տարբեր երկրների ստանդարտացման ազգային մարմինների ղեկավարների հետ, այդ թվում՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Լիտվայի, Լատվիայի, Բելառուսի, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Բրազիլիայի, Իսպանիայի, Չեխիայի և

այլն:

Չեխիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային մարմինների ղեկավարները ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր՝ ստանդարտացման ոլորտում համագործակցության վերաբերյալ:

Այսպիսով, ԻՍՕ 37-րդ վեհաժողովին հայկական պատվիրակության մասնակցությունն խիստ օգտակար և արդյունավետ էր և արձանագրեց մի շարք էական ձեռքբերումներ, որոնք հետագայում է՛լ ավելի կբարձրացնեն Ստանդարտների ազգային ինստիտուտի միջազգային դերը և կնպաստեն ստանդարտացման համաշխարհային գործընթացներում Հայաստանի ներգրավման արդյունավետության աճին:

9. ԻՍՕ-ի Չարգացող երկրների հարցերով մշտական կոմիտեի (ԴԵՎԿՕ) 48-րդ նիստը. Ռիօ դե Ժանեյրո, Բրազիլիա

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը՝ տնօրեն Ե.Ազարյանի գլխավորությամբ 2014 թվականի սեպտեմբերի 8-9 մասնակցեց Ռիօ դե Ժանեյրո քաղաքում տեղի ունեցած ԻՍՕ-ի Չարգացող երկրների հարցերով մշտական կոմիտեի (ԴԵՎԿՕ) 48-րդ պլենար նիստին:

Նիստի գլխավոր թեման էր նախապատրաստել ԻՍՕ անդամ երկրներին աջակցության հաջորդ 2016-2020թթ. ռազմավարական ծրագիրը: ԴԵՎԿՕ 48-րդ նիստի շրջանակներում կազմակերպվեցին զուգահեռ խմբային քննարկումներ, որոնց նպատակն էր բացահայտել ԻՍՕ անդամների մտահոգությունները, ինչպես նաև ուսումնասիրել նրանց առաջարկությունները և կարծիքները նոր ռազմավարական ծրագրի կազմման համար:

Ստանդարտների ազգային ինստիտուտի փոխտնօրեն Գ.Նազարյանը սեպտեմբերի 10-ին մասնակցեց ԴԵՎԿՕ նախագահի խորհրդատվական խմբի 22-րդ նիստին, որի ընթացքում ամփոփվեցին ԴԵՎԿՕ-ի 48 պլենար նիստի արդյունքները, ինչպես նաև ԻՍՕ գլխավոր քարտուղարի և ԴԵՎԿՕ նախագահի հետ քննարկվեց ԴԵՎԿՕ հետագա գործունեության ռազմավարությունը: ԴԵՎԿՕ նախագահի խորհրդատվական խմբի առաջարկով պարոն Գ.Նազարյանը վերընտրվեց խմբի անդամ երկրորդ անգամ՝ երկու տարի ժամկետով:

10. «Ստանդարտացման լավագույն գործելակարգ» թեմայով ԻՍՕ-ի կողմից կազմակերպված աշխատաժողով Վիլնյուսում, Լիտվա

ԻՍՕ-ի (Ստանդարտացման միջազգային կազմակերպություն) «Չարգացող երկրներին աջակցության 2011-2015թթ. ծրագրի» շրջանակներում ԻՍՕ-ի կողմից 2014թ. հոկտեմբերի 6-7 Վիլնյուսում, Լիտվա կազմակերպվեց աշխատաժողով՝ «Ստանդարտացման լավագույն գործելակարգ» թեմայով:

Աշխատաժողովը նախատեսված էր Ստանդարտացման ազգային մարմիններում ստանդարտացման աշխատանքները ղեկավարող պաշտոնյաների համար: Աշխատաժողովին մասնակցեցին ներկայացուցիչներ Հայաստանից, Ալբանիայից, Բոսնիա և Հերցեգովինայից, Խորվաթիայից, Մակեդոնիայից, Սլովենիայից, Լիտվայից, Ուկրաինայից, Վրաստանից, Մոլդովայից, Տաջիկստանից, Ադրբեջանից և Ղրղզստանից: Որպես Հայաստանի ներկայացուցիչ աշխատաժողովին մասնակցեց Ստանդարտների ազգային ինստիտուտի փոխտնօրեն Գ.Նազարյանը: Աշխատաժողովը վարեցին ԻՍՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Քեվին Մաք Քինլին և ԻՍՕ-ի Ստանդարտացման գծով տնօրեն Թրեվոր Վիգեն:

Ընդհանուր առմամբ ներկայացվեցին Առևտրի Համաշխարհային Կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերաբերյալ համաձայնագրի սկզբունքները և ԻՍՕ-ի կողմից ի լրումն դրանց հոչակված լրացուցիչ սկզբունքները, մեկնաբանվեցին դրանց

կիրառման մոտեցումները ստանդարտացման գործընթացներում: Մասնակիցները կոնկրետ գործնական օրինակների վրա քննարկեցին այդ սկզբունքների կիրառումը: Աշխատաժողովի վերջում յուրաքանչյուր մասնակից առանձին-առանձին հարցազրույց անցավ ԻՍՕ-ի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում պարզաբանվեցին կոնկրետ հարցադրումների հետ կապված խնդիրները:

Հոկտեմբերի 7-ին փոխտնօրեն Գ.Նազարյանը այցելեց Լիտվայի Ստանդարտների ազգային ինստիտուտ, որտեղ հանդիպում ունեցավ տնօրեն պարոն Դեյվիս Զաբուլիոնիսի և Ալբանիայի Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն պարոն Ռիգա Հասանաջի հետ: Հանդիպման ընթացքում կատարվեց ստանդարտացման որոշ խնդիրներով փորձի և կարծիքների փոխանակում: Քննարկվեցին միջազգային ստանդարտացման ոլորտում համագործակցության խնդիրները:

11. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում նշվեց Ստանդարտացման միջազգային օրը

2014 թվականի հոկտեմբերի 14-ին նշվեց Ստանդարտացման միջազգային օրը: Օրվա առիթով ՀՊՏՀ նիստերի սրահում անցկացվեց սեմինար-դասընթաց, որը կազմակերպել էր բուհի ապրանքագիտության և տեխնոլոգիայի ամբիոնը: Սեմինարին մասնակցում էին ՀՊՏՀ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պարույր Քալանթարյանը, ապրանքագիտության և տեխնոլոգիայի ամբիոնի կողմից հրավիրված Ստանդարտների ազգային ինստիտուտի փոխտնօրեն, տ.գ.թ. Գևորգ Նազարյանը, նշված ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը, աշխատակիցներ, ուսանողներ: Քննարկվեցին ստանդարտացման միջազգային և ազգային միտումներն ու հեռանկարները, ինչպես նաև նոր կադրերի ներգավման խնդիրները:

2. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

2.1. ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Ստանդարտների ազգային ինստիտուտը հետևողականորեն իրականացրել է ՀՀ կառավարության որոշումներով և ՍԱԻ տնօրենի 03.05.2013թ. թիվ 16-Վ հրամանով հաստատված «Ազգային ստանդարտների մշակման 2013-2015 թվականների միջնաժամկետ ծրագրով» նախատեսված ստանդարտների մշակման աշխատանքները:

Ինստիտուտը ստանդարտացման աշխատանքներն իրականացրել է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների հետ համատեղ: Մշակման գործընթացում մասնակցել են համապատասխան ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները՝ միաժամանակ գնահատելով ՀՀ-ում միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտների կիրառման նպատակահարմարությունը՝ ազգային ստանդարտների կարգավիճակով: Ազգային ստանդարտները մշակվել են վերահրատարակման և հավանության եղանակներով:

Ստանդարտների ազգային ինստիտուտի առաջնահերթ խնդիրներից էր Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների ներդաշնակեցման աշխատանքների իրականացումը: Ընդ որում, հաշվի առնելով Եվրասիական Տնտեսական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության գործընթացը, այդ թվում՝ իրականացվելիք միջոցառումների ճանապարհային քարտեզի համաձայն իրականացվել է ՀՀ տեխնիկական կանոնակարգերի ներդաշնակեցումը Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգերի և Եվրամիության դիրեկտիվների պահանջների հետ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության հանձնարարությամբ Ստանդարտների ազգային ինստիտուտը հաշվետու ժամանակաշրջանում վերլուծության է ենթարկել Մաքսային միության թվով 34 տեխնիկական կանոնակարգերի պահանջների կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկերը՝ ՀՀ-ում դրանց ներդրումն ապահովելու նպատակով: Իրականացվել են վերլուծական աշխատանքներ՝ որոշելու համար վերոնշյալ տեխնիկական կանոնակարգերից յուրաքանչյուրի պահանջների կիրառումն ապահովող ստանդարտների կարգավիճակը ՀՀ-ում: Այդ աշխատանքների կատարման արդյունքում պարզվել է, որ ՀՀ-ում ազգային ստանդարտի կարգավիճակով գործարկման և ներդրման են ենթակա շուրջ 2700 միջպետական և Ռուսաստանի Դաշնության ստանդարտներ՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովելու համար:

Ի կատարումն ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2014 թվականի ծրագիրը և որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2014 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N616-Ա որոշման «Պետական աջակցություն «Ստանդարտների ազգային ինստիտուտե փակ բաժնետիրական ընկերության կողմից 2014 թվականի ստանդարտացման ոլորտում ծրագրերի կատարման գծով» ծրագրի և համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՍԱԻ միջև 2014 թվականի օգոստոսի 21-ին կնքված N125-14 պայմանագրի՝ ինստիտուտը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է հետևյալ միջոցառումները (աշխատանքները)՝

- 1) Տեխնիկական կանոնակարգման ոլորտներում տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների ներդաշնակեցման աշխատանքներ,
- 2) ՀՀ-ում գործող տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկի մշակում և հրապարակում:

Հաշվետու ժամանակաշրջանում գործողության մեջ են դրվել թվով 664 միջպետական և ՌԴ ստանդարտներ: Այդ ստանդարտների կիրառումը կապահովվի ՀՀ-ում գործող հետևյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումը.

- Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն,
- Ներքին այրման շարժիչների վառելիքների,
- Հյութերի և հյութամթերքներին ներկայացվող պահանջների,
- Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների,
- Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների,
- Անհատական պաշտպանության միջոցների,
- Մսի և մսամթերքի,
- Մեքենաների և սարքավորումների անվտանգության,
- Հանքային պարարտանյութերի,
- Մակերևութակառուցված միջոցների և մակերևութաակառուցված նյութերի,
- Հակասառիչների և հիդրավլիկ արգելակի հեղուկների,
- Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների,
- Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի,
- Օդաճնշական դողերի,
- Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների,
- Թարմ պտուղ բանջարեղենի:

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտը մշակել է ՀՀ-ում գործող 12 տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկերը, որոնցում ընդգրկվել են հիմնականում միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակեցված ազգային ստանդարտներ: Նշված ցանկերը տեղադրված են ՍԱԻ պաշտոնական կայքում՝ http://www.sarm.am/am/act_of_the_law/naxarari-hramanner:

Ի կատարումն ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 4-ի «Ստանդարտների մշակման ծառայությունների 2014 թվականի ծրագիրը և ստանդարտացման 2014 թվականի աշխատանքների ցանկը հաստատելու մասին» N 576-Ա որոշման և դրա հիման վրա 2014 թվականի հուլիսի 2-ին ՀՀ էկոնոմիկային նախարարության և ՍԱԻ միջև կնքված N96-14 պայմանագրի՝ հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է միջազգային (ԻՍՕ) և Եվրոպական (ԵՆ) ստանդարտներին ներդաշնակ 69 ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ:

Մշակվել են ազգային ստանդարտներ ՀՀ տնտեսության գերակայող հետևյալ ճյուղերում՝ շինարարություն, ռազմարդյունաբերության, զբոսաշրջության, գազամատակարարում, բնապահպանություն, հանրային տրանսպորտ, սննդամթերքի և գյուղատնտեսական մթերքի արտադրություն, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտ և այլն:

Բացի դրանից, ՀՀ կառավարության 19.03.2014թ. «ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N1251-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և 2006 թվականի հուլիսի 27-ի N 1400-Ն և նոյեմբերի 30-ի N 1854-Ն որոշումներն ուժը կորցրած

ճանաչելու մասին» N 343-Ն որոշման, ինչպես նաև շահագրգիռ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված ստանդարտացման աշխատանքային խմբի 2014 թվականի օգոստոսի 14-ի նիստի N2 արձանագրության՝ հաստատվել և գործողության մեջ է դրվել ՀՍ 110-2014 «Տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ. Տիպեր և հիմնական չափեր. Տեխնիկական պահանջներ» ազգային ստանդարտը:

2.2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ստանդարտների ազգային ինստիտուտը հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպել է ՀՀ ընկերությունների մասնակցությունը ԻՍՕ-ի 47 ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի 19 ենթահանձնաժողովի և 3 քաղաքականության մշակման հանձնաժողովի աշխատանքներին:

Կազմակերպվել են միջազգային ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկության աշխատանքներ, որի ընթացքում 167 միջազգային ստանդարտների նախագծեր անցել են փորձաքննություն և համաձայնեցվել են ՀՀ-ում բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

ՍԱԻ կողմից իրականացվել է աշխատանքներ միջազգային ստանդարտացման կազմակերպության և նրա հանձնաժողովների հետ, ինչպես նաև ստանդարտացման եվրոպական կոմիտեի և նրա հանձնաժողովների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում տեխնիկական հանձնաժողովներին ստանդարտացման աշխատանքների իրականացման նպատակով տրամադրվել են շուրջ 1290 եվրոպական ստանդարտ:

Իրականացվել են հետևյալ միջպետական ստանդարտացման աշխատանքները՝

1. կազմակերպվել և կատարվել է շուրջ 1422 միջպետական ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն,

2. կատարվել է ԱՊՀ երկրների Միջպետական ստանդարտացման խորհրդի (ՄՍԽ) շուրջ 24 հանձնարարականներ,

3. կազմակերպվել է շուրջ 650 միջպետական ստանդարտների նախագծերի համաձայնեցում ՀՀ շահագրգիռ 40 կազմակերպությունների հետ:

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ծրագրի նպատակն է ունենալ միջազգային, եվրոպական, միջպետական և այլ պետությունների, ինչպես նաև ազգային ստանդարտների արդիականացված ֆոնդ և պատշաճ և հավաստի տեղեկատվություն տրամադրել ձեռներեցներին, բիզնեսի ներկայացուցիչներին և պետական կառավարման մարմիններին գործող ստանդարտների վերաբերյալ:

2.3. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Ստանդարտների ազգային ֆոնդը համալրվել է 887 միջազգային (ԻՍՕ), 1290 եվրոպական (ԵՆ), 1855 միջպետական (ԳՕՍՍ), 1519 Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՍ Ռ) և 69 Հայաստանի Հանրապետության (ՀՍ) նոր ստանդարտներով: Ստանդարտների էլեկտրոնային տարբերակները արխիվացվել են:


Ստանդարտների ազգային ինստիտուտն իրականացրել է նաև ՀՀ-ում ընդունված և գործող ստանդարտների էլեկտրոնային տարբերակների ստեղծման և կայքում տեղադրման աշխատանքներ՝ ստանդարտների էլեկտրոնային վճարման համակարգի ներդրման նպատակով:

«Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերի համաձայն, ստանդարտների ազգային ինստիտուտը՝ որպես ստանդարտացման ազգային մարմին, ձեռնարկատերերին, պետական կառավարման մարմիններին և մասնագետներին ապահովում է ստանդարտացման փաստաթղթերի վերաբերյալ սպառիչ տեղեկատվության մատուցումը:

2014 թվականին Ինստիտուտում զգալի աշխատանքներ են կատարվել ստանդարտների ազգային ֆոնդում առկա բոլոր ստանդարտների թվայնացման ուղղությամբ և ձևավորվել է ստանդարտների էլեկտրոնային բազան, որի հիման վրա ծրագրավորվել, կազմավորվել և ներդրվել է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի էլեկտրոնային գրադարանի արդիականացված տարբերակը: Էլեկտրոնային գրադարանը ընդգրկում է Հայաստանի Հանրապետությունում գործող, ինչպես նաև փոխարինված և գործողությունը դադարեցված ազգային ստանդարտները: Էլեկտրոնային գրադարանը թույլ կտա խթանել ստանդարտների վաճառքը՝ առցանց վաճառքի ներդրման միջոցով, ինչի ուղղությամբ աշխատանքները դեռևս շարունակվում են: Նշված աշխատանքներն իրականացնելու համար ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2014 թվականի ծրագիրը և որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2014 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N616-Ա որոշման «Պետական աջակցություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2014 թվականի ստանդարտացման ոլորտում ծրագրերի կատարման գծով» ծրագրի համաձայն տրամադրված միջոցներով Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերությունը պայմանագիր է կնքել և «Ի Վորկս» ՍՊ ընկերության հետ (պայմանագիր N1711 առ 18.11.2014թ), որը պայմանագրի համաձայն իրականացրել է նորմատիվ փաստաթղթերի էլեկտրոնային բազայի կառավարման համակարգի վերածրագրավորման աշխատանքներ:

Գծանկար 1.

Ազգային ստանդարտների ներդաշնակեցումը միջազգային ստանդարտներին (ԻՍՕ, ԻԷԿ, ԵՆ), տոկոսներով



Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության գործատուներին և մասնագետներին սպառիչ տեղեկատվություն ապահովելու համար նախապատրաստվել է «ՀՀ ստանդարտների 2014 թվականի կատալոգի» էլեկտրոնային տարբերակը, որի որոնման համակարգը համապատասխանում է միջազգային գործելակարգին:

2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության գործատուներին և մասնագետներին սպառիչ տեղեկատվություն ապահովելու համար հրատարակվել է «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» թվով 4 տեղեկատուներ և պատրաստվել է ՀՀ կազմակերպությունների համար 12 տեղեկատվական թերթիկ՝ ազգային ֆոնդում համալրված բոլոր ստանդարտների վերաբերյալ, որոնք տրամադրվել են Ինստիտուտի բոլոր բաժանորդներին:

2014թ.-ին Ինստիտուտը ՀՀ կազմակերպությունների հետ կնքել է 33 պայմանագիր՝ արճենտային սպասարկման աշխատանքների իրականացման նպատակով:

Համաձայն գործող պայմանագրերի պատրաստվել է ձեռնարկությունների հետ հանձնման-ընդունման 43 ակտ: Կատարված աշխատանքների արդյունքում կազմվել են աշխատանքների հանձնման-ընդունման համապատասխան ակտերը հետևյալի մասով.

- տեղեկատվության տրամադրում ազգային ֆոնդում միջազգային (ԻՍՕ, ԻԷԿ, ԵՆ), միջպետական (ԳՕՍՏ), Հայաստանի Հանրապետության (ՀՍ) և արտասահմանյան երկրների (այդ թվում՝ ԱՊՀ) ստանդարտների և այլ նորմատիվ փաստաթղթերի մասին,
- կազմակերպությունների ստանդարտների ֆոնդի արդիականացում,
- ՀՀ ստանդարտների ամենամյա կատալոգի, ստանդարտների և տեխնիկական պայմանների եռամսյակային տեղեկատուների տրամադրում,
- բաժանորդին անհրաժեշտ ազգային ստանդարտների անվճար տրամադրում (թվով 310),
- խորհրդատվություն ստանդարտացման և համապատասխանության գնահատման փաստաթղթերի վերաբերյալ:

Նշված ակտերը տրամադրվել են կազմակերպություններին, որից հետո Ստանդարտների ազգային ինստիտուտին փոխանցվել է **4680000 ՀՀ դրամ**:

Ստանդարտների վաճառքը իրականացվում է պայմանագրային հիմունքներով ըստ հաստատված գնահաշվարկի և տրված հաշիվ-ապրանքագրի կամ անդորրագրի: Ազգային ստանդարտների վաճառքի դեպքում կազմակերպության կողմից ներկայացվում է անհրաժեշտ ստանդարտների գնման հայտ և կնքվում է պայմանագիր:


Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է **951500 դրամի** (թվով 140 հատ) ստանդարտների վաճառք ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին, որից 4 ԻՍՕ ստանդարտ՝ **265100 ՀՀ դրամ** արժողությամբ:

Հաշվետու ժամանակամիջոցում համաձայն կնքված պայմանագրի՝ ԼՂՀ ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման կենտրոնին տրամադրվել են մի շարք ստանդարտներ՝ **368000 ՀՀ դրամ** գումարով:


ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2009-2014թթ. քանակական և գումարային դինամիկան ներկայացված է գծանկարներ 2-ում:

Կայքի «Ծանուցում» բաժնում պարբերաբար տեղադրվել են մշակված և քննարկման փուլում գտնվող ստանդարտների նախագծերը՝ ծանուցման նպատակով:

ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2009-2014թթ. քանակական դինամիկան



ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2009-2014թթ. գումարային դինամիկան, հազ.դրամ




Ինչպես երևում է վերը պատկերված ստանդարտների վաճառքի դինամիկայից, ստանդարտների վաճառքը որոշակի աճ է արձանագրել:

2014թ-ին Ինստիտուտը շարունակել է կազմակերպության ստանդարտների մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցումը, որի հիմնական նպատակն է օգնել միջին և փոքր ձեռնարկություններին և անհատ ձեռնարկատերերին մշակել կոնկրետ տեսակի արտադրանքի համար կազմակերպության տեխնիկական փաստաթղթերը՝ համաձայն գործող արդի ստանդարտացման փաստաթղթերի և տեխնիկական կանոնակարգերի պահանջների:


Կազմակերպության ստանդարտների և դրանց փոփոխությունների մշակման խորհրդատվական ծառայություններ են մատուցվել 12 կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար, որից հասույթը կազմել է **485.0 հազ. դրամ**: Համեմատության համար, 2013 թվականին 30 կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար նշված ծառայություններից հասույթը կազմել է **600.0 հազ. դրամ** (տես գծանկար 4-ը):

Խորհրդատվական աշխատանքներից հասույթը 2013-2014թթ. հազ. դրամ



2014 թվականին հաշվառման ներկայացված 188 տեխնիկական պայմաններ և դրանց 179 փոփոխություններ ենթարկվել են փորձաքննության և հաշվառվել են, որի հիմնական նպատակն է համապատասխանեցնել կազմակերպության նորմատիվ փաստաթուղթը Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը, տեխնիկական կանոնակարգերին և ազգային ստանդարտներին: 2013 թվականին հաշվառման ներկայացված 372 տեխնիկական պայմաններ տեխնիկական պայմանների փոփոխություններ ենթարկվել են փորձաքննության և հաշվառվել են: Այդ աշխատանքներից ստացված հասույթը կազմել է 2014 թվականին կազմել է **8235 հազ. դրամ**:

Տեխնիկական պայմանների փորձաքննության աշխատանքներից հասույթը 2013-2014թթ.



3. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտում գործել են 4 հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներ, այդ թվում՝

1. Երևանի փորձարկման լաբորատորիան,
2. Էլեկտրատեխնիկական փորձարկումների լաբորատորիան,
3. Նավթամթերքների և ֆիզիկաքիմիական փորձարկումների լաբորատորիան,
4. Գյումրու տարածքային փորձարկման լաբորատորիան:

3.1. ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Էլեկտրատեխնիկական փորձարկումների լաբորատորիան հաշվետու ժամանակաշրջանում ընդունել է 118 հայտ, տրվել է 118 փորձարկման արձանագրություն: Իրականացվել են լաբորատորիայի հավատարմագրման հետ կապված աշխատանքները, որոնք դրական եզրակացություն են ստացել հավատարմագրման ազգային մարմնի կողմից:

Լաբորատորիայի հետագա գործունեության բարելավման համար ներկայումս անհրաժեշտ է վերազինել լաբորատորիան, ինչի կապակցությամբ կատարվել է առկա կարիքների գնահատում և ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը: Կարևորվում է նաև Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Միջազգային էլեկտրատեխնիկական կոմիտեին՝ փորձարկման մեթոդների ստանդարտների բազայի արդիականացման համար:

3.2. ՄՆԵՂԻ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

Երևանի փորձարկման լաբորատորիան միջազգային չափանիշներին համապատասխանող բարձրակարգ սարքավորումներով հագեցված լաբորատորիա է: Շիրակի և Վանաձորի տարածքային փորձարկման լաբորատորիայի հագեցվածությունը և հնարավորությունները համեմատաբար առավել թույլ են, առկա են հնամաշ սարքավորումներ, որոնք փոխարինման կարիք են զգում:

Հաշվետու ժամանակաշրջանում Երևանի փորձարկման լաբորատորիային ընդունել է սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների փորձարկման 692 հայտ և տրվել են նույնքան փորձարկման արձանագրություններ, Գյումրու ՓԼ՝ 984 հայտ և 984 փորձարկման արձանագրություններ:

Լաբորատորիաների խնդիրներից է բարձրակարգ ու երիտասարդ մասնագետների պակասը, որոնց ներգրավումը խոչընդոտվում է ցածր աշխատավարձերով: Բացի այդ, լաբորատոր փորձարկումների գները և փորձարկումների առկա պահանջարկը բավականաչափ բարձ չեն, որպեսզի կարողանան ծածկել անհրաժեշտ կապիտալ ծախսերը:

Լուրջ խնդիր է նաև փորձարկման առկա սարքավորումների օգտագործման գծով անձնակազմի ուսուցման կազմակերպումը, ինչի համար կարիք կա ներգրավելու միջազգային

փորձագետների: Լաբորատոր նյութերի ձեռք բերումը ևս խնդիրներ է առաջացնում, քանի որ մեծամասամբ կարիք է առաջանում բարձրակարգ նյութերը ներմուծել արտասահմանից:

3.3. ՆԱՎԹԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Այս լաբորատորիան տեղակայված է ք.Երևան, Հ. Էմինի Յ1ա տարածքում: Այն ունի միջին բավարար հագեցվածություն, ինչը թույլ է տալիս պատշաճ ձևով իրականացնել նավթամթերքների համար սահմանված պահանջների փորձարկումները:


Հաշվետու ժամանակաշրջանում նավթամթերքի փորձարկման լաբորատորիայում կատարվել է 744 փորձարկում, որից 743-ի համար տրվել է համապատասխանության եզրակացություն, իսկ 1-ին՝ մերժում:

Նախապատրաստվել և հավատարմագրման նպատակներով ներկայացվել են լաբորատորիայի հավատարմագրման փաստաթղթերը, որոնց վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն:

Լաբորատորիան կատարել է համապատասխան աշխատանքներ ներկայիս սարքավորումները ստուգաչափելու նպատակով: Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2014 թվականի ծրագիրը և որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2014 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N616-Ա որոշման «Պետական աջակցություն «Ստանդարտների ազգային ինստիտուտն փակ բաժնետիրական ընկերության կողմից 2014 թվականի ստանդարտացման ոլորտում ծրագրերի կատարման գծով» ծրագրի համաձայն տրամադրված միջոցներով իրականացվել է լաբորատորիայի վերազինում: Մասնավորապես ձեռք են բերվել լիովին նոր հետևյալ սարքավորումները՝ СПЕКТРОСКАН SL, АНАЛИЗАТОР SHATOX SX -300, ПТФ установка, Криостат КРИО-ВТ-05-01, որոնք թույլ կտան լաբորատորիային իրականացնել ինչպես ազգային, այնպես էլ Մաքսային Միության համապատասխան տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան բոլոր անհրաժեշտ փորձարկումները, ոչ էթիլային ավտոմոբիլային և դիզելային վառելիքներում որոշել ծծմբի պարունակությունը, ինչի շնորհիվ կներմուծվի այնպիսի նավթամթերք, որի՝ շրջակա միջավայր թունավոր արտանետումների քանակը կլինի նվազագույնը:

Գծանկար 6

Ինստիտուտի հավատարմագրված լաբորատորիաներում կատարված փորձարկումների քանակը 2012-2014թթ.




4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կազմում հավատարմագրված սննդի և պարենային հումքի, ոչ պարենային ապրանքների, ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինները (ՍՄ) շարունակել են իրականացնել համապատասխանության հավաստման աշխատանքներ: Ինստիտուտի սերտիֆիկացման մարմինների գործունեության ծավալներն շարունակում են գերակայել հանրապետությունում հավատարմագրված այլ ՍՄ նկատմամբ:

Գծանկար 7.

Սերտիֆիկացման մարմինների 2014թ. իրականացված համապատասխանության հավաստման աշխատանքների տեսակարար կշիռները ընդհանուրի համեմատ



Գծանկար 4-ում պատկերված է Հայաստանում հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների կողմից առ 01.01.2015թ. իրականացված համապատասխանության հավաստման բոլոր տեսակի աշխատանքների (սերտիֆիկատ, հայտարարագիր, մաքսային օրինակ և այլն) տեսակարար կշիռը ընդհանուր ծավալում:

Ինչպես երևում է գծանկար 4-ից, թեև ընդհանուր առմամբ համապատասխանության հավաստման ոլորտում 2014թ.-ին հավատարմագրված են եղել և գործունեություն են իրականացրել 12 ընկերություններ, այդուհանդերձ ոլորտի գերակշիռ մասը՝ շուրջ 68% բաժին է ընկնում Ստանդարտների ազգային ինստիտուտին: Մյուս խոշոր մասնաբաժին ունեցող ընկերություններն են՝ մասնաբաժնով «Մավաս Գրուպ» ՍՊԸ՝ 14%, «Նարեկ» ՍՊԸ՝ 10% և Առողջապահության ազգային ինստիտուտ՝ 5%: Մնացած բոլոր ընկերություններին բաժին է ընկել սերտիֆիկացման աշխատանքների ընդհանուր ծավալի 3%-ը:

4.1. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում տրվել են՝

ա) ոչ պարենային ապրանքների գծով՝

990 ներկրվող արտադրանքի և 59 տեղական արտադրության համապատասխանության սերտիֆիկատ (ընդամենը՝ 1049),

826 ներկրվող արտադրանքի և 41 տեղական արտադրանքի համապատասխանության հայտարարագիր (ընդամենը՝ 867),

իրականացվել է 28 համապատասխանության հսկողություն,

կատարվել է տեխնիկական պայմանների 24 փորձաքննություն:

Ոչ պարենային ապրանքների սերտիֆիկացման գծով 2013 թվականին ընդունվել է 1677 հայտ, իսկ 2014 թվականին՝ 1651 հայտ:

բ) սննդի և պարենային հումքի գծով տրվել են՝

961 (2013թ.՝ 1197) համապատասխանության սերտիֆիկատ, այդ թվում՝ 514 ներկրվող արտադրանքի և 447 տեղական արտադրության համար:

1025 (2013թ.՝ 885) համապատասխանության հայտարարագիր, այդ թվում՝ 582 ներկրվող արտադրանքի և 443 տեղական արտադրության համար:

Իրականացվել է համապատասխանության հսկողություն՝ 40,

2014թ. ընդունվել է 1451 հայտ, 2013թ.՝ 1560 հայտ, 2012թ.՝ 1825 հայտ:

գ) ծառայությունների սերտիֆիկացման գծով՝

տրվել է սննդի ապահովման ծառայության 156 (2013թ.՝ 153) համապատասխանության սերտիֆիկատ,

109 (2013թ.՝ 121) ընկերություններում կատարվել է սննդի ապահովման ծառայության համապատասխանության հսկողություն:

Ծառայությունների սերտիֆիկացման գծով 2014 թվականին ընդունվել է 153 հայտ, 2013 թվականին՝ 126 հայտ, 2012թ.՝ 160 հայտ:

Այսպիսով, ծառայությունների սերտիֆիկացման ոլորտում նկատվել է սերտիֆիկացման ծավալների որոշակի աճ:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և իրականացվել են արտադրանքի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման աշխատանքները:

4.2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից ընդունվել է կառավարման համակարգերի սերտիֆիկացման 11 հայտ:

10 կազմակերպություններում իրականացվել է կառավարման համակարգերի սերտիֆիկացում:

31 կազմակերպություններում իրականացվել են սերտիֆիկացված կառավարման համակարգերի համապատասխանության հսկողության աշխատանքներ:

Կազմակերպվել և իրականացվել են կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման աշխատանքները:

Ներկայումս Ինստիտուտի կողմից աշխատանքներ են տարվում՝

ա) կազմակերպությունների էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքների ակտիվացման և համապատասխան իրազեկության ապահովման ուղղությամբ,

բ) սերտիֆիկացման մարմինների աշխատակիցների որակավորման բարձրացման ուղղությամբ՝ նրանց միջազգային չափանիշներին համապատասխանող դասընթացներին մասնակցության ու ԻՌԿԱ-ում որպես աուդիտորներ գրանցման միջոցով:

ՀՀ կառավարության 26.02.1998թ. թիվ 116 «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա մրցանակներ սահմանելու և շնորհելու մասին» որոշման համաձայն, արտադրանքի և ծառայությունների որակի բարձրացումը խթանելու, դրանց որակի կառավարման արդյունավետ մեթոդների ներդրմանն աջակցելու նպատակով Ինստիտուտի կողմից նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման ուղղությամբ: Հարկ է նշել, որ այդ մրցանակաբաշխությունը 2009 թվականից ի վեր չի անցակցվել, ինչը զգալի խոչընդոտներ է ստեղծում ԱՊՀ երկրների ամենամյա մրցանակաբաշխությանը հայկական ընկերությունների մասնակցության համար:

2014թ հունիս-նոյեմբեր ամիսներին Ինստիտուտի կողմից իրականացվել են հետևյալ գործընթացները՝ համաձայն միջոցառումների պլանի (համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարության 2014թ. հունիսի 17-ի N 05/3660-14 գրության)։

- Հրատարակվել է «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ 2014թ. մրցույթի «Ձեռնարկ-Տեղեկատուն» և ուղարկվել է ՀՀ պետական կառավարման մարմիններին, Մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամներին և հայտ ներկայացրած կազմակերպություններին:

- Ապահովվել է պետական կառավարման մարմիններից համակարգի հավակնորդ կազմակերպությունների ցանկերի ստացումը և տեղեկատվության տրամադրումը:

- 2014թ. ընթացքում «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթով և Ստանդարտների ազգային ինստիտուտի www.sarm.am կայքով հանրությանը տեղեկացվել է 2014 թվականի արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության մրցույթի անցկացման մասին, իսկ Ստանդարտների ազգային ինստիտուտի www.sarm.am կայքում տպագրվել է հավակնորդ կազմակերպությունների ցանկը.

- Իրականացվել է մրցույթին մասնակցելու համար հավակնորդ կազմակերպություններից հայտերի ընդունման, ինքնագնահատման փաստաթղթերի ստացման գործընթացը.

- Ապահովվել է Հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված փորձագիտական հանձնախմբերի աշխատանքների կազմակերպումը հավակնորդ կազմակերպություններում (փորձագետների ցանկը հաստատվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2014թ. դեկտեմբերի 26-ի N 1082-Ա հրամանով):

Համաձայն ՀՀ Կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N890-Ն որոշմամբ հաստատված «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության ամենամյա մրցանակներ շնորհման» կարգի՝ I փուլում ընդունվել, քննարկվել, գրանցվել, համակարգվել է մրցույթին մասնակցող հավակնորդ կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը, ապահովվել է նրանց մրցանակաբաշխության պայմանների մասին տեղեկատվության տրամադրումը:

II փուլում կատարվել են ներկայացված փաստաթղթերի փորձաքննությունը և կազմվել համապատասխան եզրակացություններ:

III փուլում, տեղում կատարվել են հավակնորդների աշխատանքների ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով պարզելու ներկայացված փաստաթղթերում տրված ինքնագնահատման օբյեկտիվությունը և վերլուծելու փաստաթղթերի նախնական փորձաքննության ժամանակ փորձագետների հանձնախմբի առջև ծառայած հարցերը:

Տեղում ուսումնասիրության համար կազմել է ծրագիր և համաձայնացվել է յուրաքանչյուր հավակնորդ կազմակերպության հետ:

III փուլի աշխատանքներն ավարտվել են, և ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմվել են փորձագիտական եզրակացություններ: Հավակնորդ կազմակերպություններին մրցանակների շնորհման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ 14 կազմակերպությունից ստացված հայտերի համաձայն՝ 53 հայտատուից ձևավորվել է դասընթացների ունկնդիրների 14 խումբ և նախադիպլոմային ու արտադրական պրակտիկա անցկացնող բուհերի ուսանողների 2 խումբ: Սահմանված կարգով Ուսումնական կենտրոնում (այսուհետ՝ Կենտրոն) կազմակերպվել են **ընդհանուր, մասնագիտական և ներածական դասընթացներ**: Դասընթացներում սահմանված կարգով ներգրավվել և վերապատրաստվել է Ստանդարտների ազգային ինստիտուտի տարբեր ստորաբաժանումների 28 աշխատակից:

Ունկնդիրներին տրամադրվել են տեղեկատվական և ուսուցողական-մեթոդական նյութերի փաթեթներ: Դասընթացներն անցկացվել են ինտերակտիվ մեթոդներով ու միջոցներով՝ սլայդների ցուցադրում, թեսթեր, գործնական խաղեր, գործնական առաջադրանքներ, տարբեր իրավիճակների վերլուծություններ, խաչաձև հարցումներ, «ուղեղային գրոհներ» և այլն: Ուսուցումը գնահատվել է թեսթավորումների կամ քննությունների միջոցով, որոնց արդյունքներով ունկնդիրներին հանձնվել են վկայականներ, սահմանված կարգով գրանցելով գրանցամատյանում:

Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենի կողմից 2014թ.-ի փետրվարի 12-ին հաստատված տարեկան ուսումնական ծրագրի համաձայն 25 անվանում առանձին դասընթացների ուսումնական ծրագրերը ներկայացված են Ստանդարտների ազգային ինստիտուտի պաշտոնական էլեկտրոնային կայքում:

Հաղորդակցության տարբեր միջոցներով ապահովվել է ամենամսյա կապը ՀՀ կազմակերպությունների հետ՝ սննդարտադրող ընկերություններ, ՀՀ նախարարություններ և գերատեսչություններ, գիտահետազոտական ինստիտուտներ, համապատասխանության գնահատման մարմիններ, բուհեր: Հայտատուներն իրազեկվել են Կենտրոնում անցկացվող դասընթացների մասին:

Իր առաջնահերթություններին դասելով ՀՀ բուհերի հետ կապը և համագործակցությունը, հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնն իրականացրել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ապրանքագիտության ամբիոնի համապատասխան դասախոսների իրազեկում Կենտրոնի ծրագրերին, ինչպես նաև անցկացրել է ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկա:

2012թ. ընդունված որակի ենթակառուցվածքի ոլորտի նոր օրենսդրությամբ ներկայումս Չափագիտության ազգային ինստիտուտում և Հավատարմագրման ազգային մարմնում ձևավորվել են նմանատիպ գործունեություն ծավալող Ուսումնական կենտրոններ, ինչը բացասաբար է ազդում ՍԱԻ ուսումնական կենտրոնի վրա՝ ծառայությունների հանդեպ պահանջարկի նվազման առումով: Բացի այդ, համաձայն հավատարմագրման մարմիններին ներկայացվող պահանջների վերաբերյալ գործող ՀՍ ԻՍՕ 17011 ստանդարտի պահանջների, այդ մարմինների կողմից ուսուցման կազմակերպումը դիտվում է որպես անաչառության կամ անկողմնակալության սկզբունքի խախտում և վտանգում է այդ մարմնի հանդեպ վստահությունը:

Կենտրոնի 2014թ.-ի գործունեության համադրումը 2013թ.-ի նույն ժամանակահատվածի հետ թույլ է տալիս փաստելու հետևյալը:

- Ստանդարտացման, տեխնիկական կանոնակարգման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման ոլորտներում նոր օրենսդրության ընդունումը նվազեցրել է Կենտրոնում կազմակերպվող դասընթացներից օգտվողների շրջանակը և թիվը (2013թ.-ի 14 խմբում ընդգրկված 124 ունկնդրի փոխարեն 2014թ.-ի նույն ժամանակահատվածում 14 խմբում ընդգրկված 53 ունկնդիր):
- 2013թ.-ին անցկացվել է 402 դասաժամ, 40 ունկնդրի համար անցկացվել է 3 անվճար սեմինար:
- 2014թ.-ին անցկացվել է 468 դասաժամ, 28 ունկնդիր սպասարկվել է անվճար:

Կենտրոնում առկա են հետևյալ խնդիրները.

- Հայտատու-ունկնդիրների հոսքի ապահովման լծակների և միջոցների որոնում,
- Կենտրոնի անձնակազմի համալրում մասնագետ թրեյներներով, որոնք պետք է տիրապետեն թրեյնինգների միջազգայնորեն ընդունված գործիքներին, մեթոդներին, կանոններին,
- Ունկնդիրների առաջարկների և գնահատականների հիման վրա թրեյնինգների ուսումնամեթոդական բազայի շարունակական բարելավում,
- ՀՀ բուհերի հետ աշխատանքների ակտիվացում, նպաստելով մրցունակ մասնագետների ձևավորմանը,
- ՀՀ սննդարտադրողների հետ աշխատանքների ակտիվացում, հատկապես նրանց ներգրավում ՀՀ-ում պարտադիր դարձած HACCP համակարգի պահանջների ուսուցմանը, այս կերպ օժանդակելով համակարգի ներդրման գործընթացներին:

6. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում ՍԱԻ հասույթը կազմել է **222,5 մլն դրամ**: Ընդ որում, **աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների** ծախսը կազմել է **157,3 մլն դրամ** կամ հասույթի շուրջ 71%:

Աղյուսակ 2.

2014թ. փաստացի եկամուտները և տարեկան կանխատեսումները, հազ. դրամ

Ծառայության անվանումը	Կանխատեսում տարեկան	1 եռամսյակ	2 եռամսյակ	3 եռամսյակ	4 եռամսյակ	Ընդամենը	Տարբերություն
Համապատ. հավաստում	60000,0	13475,5	17676,8	17226,0	21337,4	69715,7	9715,7
Փորձարկումներ	75000,0	13907,5	20068,4	15880,0	18081,5	67937,4	-7062,6
Ծառայությունների սերտիֆիկացում	11000,0	2164,5	3465,9	3367,6	3204,5	12202,5	1202,5
Կառ. համ. սերտիֆիկացում	22000,0	846,0	10289,0	1629,0	9476,0	22240,0	240,0
Ստանդարտացման պետ. պատվեր	70000,0	2609,6	3296,0	8434,8	30021,0	44361,4	-25638,6
Մարքեթինգ	5000,0	1115,1	1106,0	1026,4	1918,4	5165,9	165,9
Մասնագետների ուսուցում	3000,0	25,0	441,7	370,9	91,7	929,3	-2070,7
Ընդամենը	246000,0	34143,2	56343,8	47934,7	84130,5	222552,2	-23447,8

Աղյուսակ 3.


2014թ. փաստացի ծախսերը և տարեկան կանխատեսումները, հազ. դրամ

Ծախսային հոդված	Կանխատեսում տարեկան	Տարեկան փաստացի	Տարբերություն
Աշխատավարձ	175000,0	157398	60892
Գրեն., տնտ., գրենակ., լաբ. նյութեր	5000,0	5430	1095
Ներկայացուցչական ծախսեր	2200,0	2134	1132
Տրանսպ. պահպանման ծախսեր	8000,0	6910	3856
Կապի ծառ. , գրասենյակային	5000,0	4967	1450
Էներգիա, գազ	16000,0	11160	9407
Վարձավճար	2300,0	2125	780
Գործուղման ծախսեր	12300,0	13574	2700
Չնախատեսված այլ ծախսեր	5000,0	8425	3189
Մաշվածություն	8000,0	5161	8000
Ընթացիկ վերանորոգում	4000,0	0	4000
Ընդամենը	242800,0	217284,0	25516,0

Ընդհանուր առմամբ, հարկ է փաստել, որ ծախսերի ընդհանուր մակարդակը մնացել է գրեթե անփոփոխ: Աղյուսակներ 2-ի և 3-ի տվյալներից պարզ է դառնում, որ ընկերության հիմնական գործունեության գծով իրականացված փաստացի **ծախսերի ու եկամուտների տարբերությունը կազմել է 5268,2 հազ. դրամ:**

Գծանկար 8.

ՍԱԻ հիմնական գործունեությունից համախառն եկամտի 2010-2014թթ. դինամիկան, մլն.դրամ



7. 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Ընկերության ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Ստանդարտների ազգային ինստիտուտը (ՍԱԻ) ներկայումս հայտնվել է բարդ ու վատթարացող ֆինանսական վիճակում: Ֆինանսական վիճակի վատթարացումը պայմանավորված է եղել ՍԱԻ-ի գործունեության արդյունավետությունից չկախված մի շարք քաղաքականության սահմանման որոշումներով, որոնք հաշվի չեն առել ընկերության համար ֆինանսատնտեսական հետևանքները: Այսպես, կարելի է թվել հետևյալ գործոնները՝

ա) մաքսային մարմիններում պահանջների փոփոխման հետևանքով՝ կոնյակների իսկության վկայականների տրամադրման պահանջարկի անկում:

բ) 2010 թվականից հետո ՀՀ կառավարության 26.02.1998թ. թիվ 116 որոշման համաձայն հայրենական ընկերությունների համար կազմակերպվող ՀՀ կառավարության մրցանակաբաշխության անցկացման դադարեցում:

գ) Սերտիֆիկացման ծավալների ու դրանցից մուտքերի կրճատման համար իր ուրույն ազդեցությունն ունեցավ ՀՀ կառավարության 9.12.2010թ. թիվ 1599-Ն որոշմամբ համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի սերտիֆիկացման պահանջի մաքսագերծման փուլից տեղափոխումը իրացման փուլ: ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1932-Ն որոշմամբ վերացվեց հանրային սննդի ոլորտի ծառայությունների պարտադիր սերտիֆիկացման պահանջը: Իսկ այնուհետև՝ ՀՀ կառավարության 22.06.2012թ. թիվ 769-Ն որոշմամբ սերտիֆիկացման պարտադիր ցանկը ընդհանրապես վերացվեց, ինչը զգալիորեն ազդեց սերտիֆիկացման աշխատանքների պահանջարկի վրա, նվազեցնելով ընկերության հասույթը:

դ) 2012թ. նոր օրենսդրության համաձայն որակի ենթակառուցվածքի մյուս կազմակերպություններին թույլատրվեց մատուցել ուսումնական ծառայություններ: Ուսումնական կենտրոնի միջոցով իրականացվող փորձագետների որակավորման գործընթացը վերացվեց, ուսուցմանը նպաստող գործոնները ևս (հավատարմագրման պահանջ) վերացան, որի արդյունքում ուսուցման պահանջարկը գրեթե վերացել է:

ե) Պետական բյուջեից ստանդարտացման նպատակներով հատկացվող ֆինանսավորումը **կրճատվել է 40 մլն-ից մինչև 14,3 մլն դրամ**:

զ) 2012թ. նոր օրենսդրության համաձայն, տեխնիկական պայմանների խորհրդատվության և հաշվառման գործառույթի անհրաժեշտության վերացման պատճառով, այդ գծով մուտքերը զգալիորեն կրճատվեցին:

է) Ընկերությունը զգալի վնասներ է կրում ոչ անհրաժեշտ և իր ներկայիս կարիքների համար չօգտագործվող անշարժ գույքի պահպանման ծախսերի ուղղությամբ: Այդ անշարժ գույքը հնարավոր է օտարել՝ ընկերության զարգացման ծրագրերի իրականացման նպատակով:

թ) Ստանդարտների վաճառքը և ստանդարտների նկատմամբ հեղինակային իրավունքների պահպանումը պատշաճ մակարդակով չի ընկալվում պետական մարմինների կողմից: Այսպես, լաբորատորիաների և սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման

գործընթացում համապատասխան ստանդարտների ֆոնդի առկայությունը չի դիտվում որպես պարտադիր պահանջ, ինչը զգալիորեն ազդում է ստանդարտների վաճառքի մակարդակի վրա:

ժ) տարբեր ստուգող մարմինների կողմից իրականացվող հաճախակի ստուգումները խաթարում են ընկերության բնականոն աշխատանքը և մեծ անհարմարություններ ստեղծում աշխատակիցների համար:

ԱՆԵԼԻՔՆԵՐԸ.

1. Պահանջարկի աճ

Ազգային մրցունակության բարձրացման համար ստանդարտացման և համապատասխանության հավաստման գործընթացների կարևորության գիտակցման մակարդակի բարձրացումը նպաստել է ՍԱԻ ծառայությունների, ծրագրերի և փորձի պահանջարկի աճին: Վերջին տարիների ընթացքում հանրապետությունում կարիք է առաջացել վերանայել և արդիականացնել գործող տեխնիկական կանոնակարգերը, ներդաշնակեցնել դրանք Եվրասիական Տնտեսական Միության, Եվրոմիության և միջազգային պահանջներին: Ելնելով Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության և Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման միջազգային համաձայնագրի պահանջներից, ինչպես նաև Եվրասիական Տնտեսական Միության Համաձայնագրի ստորագրման գործընթացի պահանջներից, դեռևս զգալի աշխատանքներ պետք է կատարվեն ազգային ստանդարտները և տեխնիկական օրենսդրությունը միջազգային և եվրոպական ստանդարտներին ու պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: ՍԱԻ ձեռնամուխ է լինելու առաջիկա հինգ տարիներին այդ ոլորտում ապահովել առնվազն 80%-ոց ներդաշնակեցման մակարդակ: Բացի այդ, լիովին կվերանայվի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը և հին, կիրառության համար ոչ պիտանի ստանդարտները կփոխարինվեն նորերով: Միաժամանակ, այդ գործընթացը կնպաստի հանրապետության տնտեսության մեջ նոր գիտելիքի ու տեխնոլոգիայի ներդրմանը, ինչն էլ իր հերթին հիմք կհանդիսանա տնտեսական աճի ու արտահանման ծավալների մեծացման համար:

2015 թվականին նախատեսվում է, մասնավորապես, հանրապետությունում գործողության մեջ դնել շուրջ 1000 նոր ստանդարտներ՝ տնտեսության գերակա ոլորտներում: Լայնածավալ աշխատանքների իրականացումը պահանջում է նաև Ինստիտուտի վերազինում համակարգչային նորագույն տեխնիկայով, ինչը կնպաստի աշխատանքների առավել արագ իրականացմանը:

2015 թվականին ընկերությունը մի շարք միջոցառումներ կիրականացնի (ուսուցում, իրազեկման սեմինար, կլոր սեղաններ) ստանդարտների վաճառքի խթանման ուղղությամբ:

2. Ռեսուրսներ

Ըստ ՍԱԻ գնահատման, ներկայումս մատչելի ռեսուրսների մակարդակի անփոփոխ մնալու դեպքում ընթացիկ և ապագա պետական գերակայություններին արդյունավետ կերպով աջակցությունը, ինչպես նաև ՍԱԻ առաքելության և ռազմավարական նպատակների իրականացումը զգալիորեն կբարդանա: ՍԱԻ ֆինանսավորման մեծագույն բաժինը ստացվում է համապատասխանության հավաստման աշխատանքներից, որոնց պահանջարկը սակայն վերջին տարիների զգալի անկում է ապրել՝ պարտադիր սերտիֆիկացման պահանջների վերացման պատճառով: Սակայն երկարաժամկետում այդ իրավիճակը կարող է նպաստել ՍԱԻ

Ֆինանսավորման պլանում վնասի առաջացմանը: Այդ իրավիճակի շտկումը հնարավոր է միայն սերտիֆիկացման ծառայությունների պահանջարկի աճի խթանման միջոցով: Ընդ որում, նշված խնդիրը չպետք է լուծվի ձեռնարկատերերի համար լրացուցիչ խոչընդոտների ստեղծման միջոցով: Փոխարենը, շեշտը պետք է դրվի սպառողների շահերի պաշտպանության, շուկայում արտադրանքի անվտանգության մակարդակի բարձրացման նպատակների վրա:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև նոր տեխնիկական կանոնակարգերի գործողության արդյունավետության ապահովումը, Եվրասիական Տնտեսական Միության պահանջների իրականացումը **2015 թվականի ընթացքում** նպատակահարմար է տեխնիկական կանոնակարգման ոլորտներում ներդնել մաքսազերծման փուլում արտադրանքի պարտադիր համապատասխանության հայտարարագրման պահանջը:

3. Արտադրանքի անվտանգությունը

ՍԱԻ իր համապատասխանության հավաստման և լաբորատոր փորձաքննությունների ծառայությունների միջոցով մշտապես պայքարում է շուկա կեղծ և վտանգավոր արտադրանքներ ներմուծելու դեմ: Լինելով Հայաստանում ամենախոշոր սերտիֆիկացման մարմինը ՍԱԻ աշխատանքներ է տանում նաև աստիճանաբար կամավոր սերտիֆիկացման ընթացակարգերի մշակման ու կիրառման ուղղությամբ: Առաջիկա երեք տարիներին նպատակահարմար է աշխատանքներ տանել ՍԱԻ լաբորատոր հզորությունների մեծացման, ժամանակակից սարքավորումների ներդրման ուղղությամբ, ինչի շնորհիվ կապահովվի տեխնիկական կանոնակարգման ոլորտներում բարձր որակի փորձարկումների ապահովումը: Ի վերջո, այդ աշխատանքները Հայկական շուկայում որակյալ և արտահանման կողմնորոշում ունեցող ապրանքների արտադրությունն ապահովելու նպատակ են հետապնդելու համար: Հատկապես կարևորվում է նավթամթերքի և ցածր լարման էլեկտրատեխնիկական ապրանքների լաբորատորիաների հզորացումը, հանրապետությունում բացակայող նոր լաբորատորիաների հիմնադրումը (օրինակ՝ անվադողերի, տեքստիլի և այլն):

Ընդհանուր առմամբ, առաջարկվում է **2015 թվականին** նախապատրաստել հանրապետության լաբորատոր կարողությունների հզորացմանն ուղղված համալիր ծրագիր, որով ՍԱԻ հիմքի վրա կհիմնադրվի Լաբորատոր փորձարկումների նորագույն և արդիական կենտրոն: Այդ ծրագրի ֆինանսավորումը հնարավոր է ապահովել ՍԱԻ որոշ անշարժ գույքի օտարման հաշվին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ:

4. Իրազեկության բարձրացում, ուսուցում

ՍԱԻ կազմում գործում է Ուսումնական կենտրոնը, որը մատուցում է ուսուցման ծառայություններ ստանդարտացման, չափազիտության և համապատասխանության գնահատման ոլորտներում: Առաջիկա երեք տարիներին կենտրոնը հատկապես լայն քարոզչական աշխատանքներ է կատարելու ՓՄՁ շրջանում, նրանց ուսուցանելով ստանդարտացման հիմունքները, ստանդարտների կիրառման հնարավորությունները և եղանակները, ինչպես նաև ցուցադրելով ստանդարտացման և համապատասխանության գնահատման ընթացակարգերից ակնկալվող օգուտները: ՍԱԻ-ն կներդնի իր բոլոր ջանքերն ունկնդիրների շրջանակի անընդհատ ընդլայնման ուղղությամբ:

2015 թվականին կարևորվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ընդլայնումը, նոր սերնդի պատրաստմանն ուղղված ծրագրերի նախապատրաստումը և իրականացումը:

5. Ազգային համագործակցության ուժեղացում

ՍԱԻ-ի գործունեության հաջողության գլխավոր գրավականը ազգային շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունն է ստանդարտացման գործընթացներին: ՍԱԻ կարևորում է նաև ազգային գործընկերների շրջանում ստանդարտացման վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը: ՍԱԻ-ին աշխատանքներ է տանելու ազգային գործընկերների մոտ իրենց ոլորտային ստանդարտների վերլուծության և մշակման ունակությունների ձևավորման ուղղությամբ: 2015 թվականի այդ աշխատանքները և շահագրգիռ կողմերի հետ քննարկումները պետք է օժանդակեն Ինստիտուտին ստանդարտացման նոր ռազմավարական ծրագրի ձևավորմանը, որը ուղղված կլինի տնտեսության գերակա ճյուղերի, ինչպես նաև հանրային ամենամեծ կարևորություն ունեցող խնդիրների լուծմանը ուղղված ստանդարտների մշակմանը:

6. Միջազգային ստանդարտացման կազմակերպությունների հետ

համագործակցությունը և տեխնիկական աշխատանքներին մասնակցությունը

ՍԱԻ-ը անդամակցում է ԻՍՕ, ՍԵՆ և Միջպետական ստանդարտացման ու չափագիտության խորհուրդ ստանդարտացման կազմակերպություններին: ՍԱԻ-ն անընդհատ աշխատանքներ է տանում Հայաստանի միջազգային վարկանիշի բարձրացման ուղղությամբ: Այսպես, 2009 թվականից ի վեր ԻՍՕ-ի վարկանիշային 105 անդամների ցուցակում ՍԱԻ-ն հաջողվել է բարելավել իր վարկանիշը՝ 91-րդ տեղից տեղափոխվելով 65-րդ տեղը: ՍԱԻ ներկայումս ընտրվել է ԻՍՕ Խորհրդի անդամ՝ 2015-2017 թվականների ժամկետով, ինչը պարտադրում է առաջիկա երեք տարիներին Ինստիտուտին ստանձնել ակտիվ դերակատարում միջազգային ստանդարտացման ասպարեզում:

ՍԱԻ-ի միջազգային համագործակցությունը միտված է լինելու առավել ընդլայնմանը: Մասնավորապես, ՍԱԻ-ն կղիմի ՀՀ կառավարությանը և ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը՝ ՄԷԿ (Միջազգային էլեկտրատեխնիկական կոմիտեում) անդամակցության առաջարկով: Անդամակցության պարագայում հնարավորություն կստեղծվի Հայաստանի էներգետիկ համակարգի, նոր ատոմակայանի կառուցման, բաշխիչ ցանցերի արդիականացման և այլ նպատակներով ապահովել արդիական տեխնոլոգիաների և միջազգային ստանդարտների ներդրումը:

7. Մարդկային ռեսուրսներ

Առկա ծրագրերը և ծառայությունները հնարավոր չի լինի իրականացնել առանց բանիմաց և որակյալ տեխնիկական անձնակազմի: Միջազգային ասպարեզում անընդհատ ծագող նոր թեմաները և ոլորտները (օրինակ, բիովառելիք, նանոտեխնոլոգիաներ, կլիմայի փոփոխություն և այլն) պահանջում են պատրաստել նոր մասնագիտացված կադրեր: Այս նպատակով ՍԱԻ-ն անընդհատ ներդրումներ է կատարում իր անձնակազմի վերապատրաստման ուղղությամբ: ՍԱԻ մասնագետներն հաճախ ուղղարկվում են արտասահման տարբեր թրեյնինգների ու իրազեկման սեմինարների մասնկցելու համար: Այս գործընթացը մշտապես գտնվելու ՍԱԻ ուշադրության կենտրոնում և շարունակական բնույթ է կրելու: